

## «ԲԱԶՄԱՎԵՊ» ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱԳՈՅՆ ՀԱՆԴԵՍԸ

Հայ ժողովրդի պատմական ճակատագիրը իր խոր կնիքն է դրել նրա ողջ մշակոյթի վրայ: Պատմական դժնի ճակատագրի ելեւէջները դրոշմուած են նաեւ հայ պարբերական մամուլի սկզբունաւորման, ընթացքի, բնոյթի եւ բովանդակութեան վրայ: Հայ ժողովրդի քաղաքական անսագորյն ճակատագիրը, երկրի բոնի բաժանումը տարբեր հասուածների, գաղթօջախների առաջացումը տարբանոյթ պայմաններ են ստեղծել հայութեան քաղաքական, մշակութային եւ հոգեւոր-բարոյական արժէքների ստեղծման համար: Այդ առումով եւ այդ կարուածքով քննելիս բոլորովին էլ զարմանալի չէ, որ հայ առաջին պարբերականը՝ «Ազգարար»ը եւ առաջին շարքում նաեւ «Բազմավկայ»ը հիմնագրուել են Հայաստանի եւ հայկական լեռնաշխարհի սահմաններից դուրս:

Հայ մամուլի պատմութեան անդաստանում յատկապէս յիշատակելի են Մխիթարեան միաբանութեան ներդրումն ու ջանքերը: 1717 Սեպտեմբերին հայազգի մի խումբ հոգեւորականներ Մխիթար վարդապէտ Սեբաստացու առաջնորդութեամբ իշեւանեցին իտալիայի Քենէտիկ քաղաքից դէպի հարաւ գտնուող «Սուրբ Ղազար» կղզին: Այդ կղզու անունը յետագյում պիտի նշանաւոր դառնար հայ մատենագրութեան, գիտութեան եւ մշակոյթի էջերում: Մխիթարեանները արդէն երեք դար շարունակ էական աւանդ են ներդրել հայ մշակոյթի պատմութեան մէջ՝ հրապարակելով հայագիտական կարեւոր նշանակութիւն ունեցող պատմական եւ պատմագիտական սկզբնաղբիւրներ, բառարաններ, լեզուագիտական, աշխարհագրական, պատմական ուսումնասիրութիւններ, անտիկ գրականութեան թարգմանութիւններ:

Հիմնագրման առաջին իսկ տարիներից Մխիթարեան միաբանութիւնը հանդիսացել է հայագիտութեան եւ կրթական-մշակութային խոշոր կենտրոններից մէկը: Միաբանութեան կրթօջախներում ուսումնառութիւն են անցել յետագյի նշանաւոր մի

չարք պյուեր՝ բանաստեղծներ Մկրտիչ Պէջէկթաշլեանն ու Դանիէլ Վարուժանը, պատմափիպասան Ծերենցը, գրող, հրապարակախօս եւ հասարակական գործիչ Արքիար Արքիարեանը, հանրահռչակ դերասաններ Վահրամ Փափազեանն ու Պետրոս Աղամեանը եւ ուրիշներ:

Միիթարեան միաբանների մօտ հայոց լեզուին եւ հայ միջավայրին առնչուել են, ապա հայերէնին տիրապետելու իրենց առաջին փորձերն են արել օտարազգի հեղինակութիւններ՝ հանճարեղ բանաստեղծ Ճորժ Կորտոն Պալորնը, եւրոպական պատմավասարների հիմնադիր Վալտեր Սքոթը, բանաստեղծ, թատերագիր Ալֆրեդ առ Միւսէն: Նրանք շատ բարձր են գնահատել Միխթարեանների դերակատարութիւնը հայկական մշակոյթի, գյուտութեան եւ մամուլի զարգացման դորժում:

Միիթքարեանները բարձր պահեցին հայ մամուլի անունն ու պատիւը: Նրանք մէկը միւսի հետեւից հրատարակեցին աշխատութիւններ ու պարբերականներ, որոնք կոչուած էին նոր միթնոլորտ ու նոր իրավիճակ ստեղծելու հայ գիտական մտքի եւ պարբերական մամուլի անդաստանում:

Հայ անդրանիկի պարբերականը կարճ կեանք ունեցաւ: Նրա փակուելուց երեք տարի անց՝ 1799ին Վենետիկի Մխիթարեան միաբանութեան անդամ Հ. Ղուկաս հնձիճեանը լոյս է ընծայում «Տարեգրուրիւն» անունով պարբերականը՝ որպէս «Յիշատակարան Քաղաքական, պատերազմական, եկեղեցական և բանասիրական անցից եւ դիպուածոց աշխարհի»: Այն լոյս տեսաւ մինչեւ 1802: «Տարեգրուրեան» իւրաքանչիւր հատոր բաղկացած էր 884 էջից: Բոլոր նիւթերը շարադրուած են արեւմտահայ աշխարհաբար լեզուով: Իւրաքանչիւր հատորում տեղեկութիւններ էին հաղորդում նախորդ տարուայ ընթացքում աշխարհում տեղի ունեցած քաղաքական անցքերի, մշակութային կեանքում եղած նորութիւնների, առեւտրական կապերի եւ յարակից այլ երեւոյթների մասին: Մխիթարեան յաջորդ հրատարակութիւնը նոյնպէս Վենետիկում լոյս տեսած «Եղանակ Բիլօվանդեան» ամսաթերթն է:

«Եղանակ Բիւզանձնեան» պարբերականը հրատարակւում էր կրկին չ. Պուկս Ինճիճնեանի խմբգրութեամբ: Այս պարբերականում եւս նիւթերը շարադրուած են աշխարհաբար գիւբամատչելի լեզուով: Խրաքանչիւր հատոր բազկացած էր 288-309 էջից: Էջերը զարդարուած են մանրանկարներով: Պարբերականում աւելի մեծ տեղ էր յատկացուած հայոց բազմադարեան պատմութեան հարցերին, յատկապէս հերոսական դրուագների նկարագ-

բութեանը, պատմական նշանաւոր դէմքերի գործունէութեանը: Այն գոյատեւել է մինչեւ 1820 թուականը՝ չուրջ 17 տարի:

*Միիթարեան միաբանութեան երրորդ պարբերականը «Դիտակ Բիւզանդիեան» երկշաբաթերթն է, որ լոյս է տեսել 1812ին վենետիկում, աշխարհաբար լեզուով: Նրա առաջին խմբագիրն է եղել Հ. Գրիգոր վարդապետ Գապարանէանը: Այնուհետեւ պարբերականը խմբագրել են Հ. Մատաթիա Փիւսկիւլնեանը եւ Հ. Մանուէլ Զախշախինանը: Թէեւ այն պարբերականի լոյս ընծայումը իրականացուեց Կ. Պոլսում հիմնադրուած «Արշարուենաց ընկերութեան» նախաճեռնութեամբ, սակայն նրա գաղափարական ու քաղաքական բովանդակութիւնը վերահսկում էր Միիթարեանների կողմից: «Դիտակ Բիւզանդիեանը» ունէր ամսագրին յատուկ ծաւալ, բայց բովանդակութեամբ լրագիր էր, քանի որ լուրեր ու տեղեկութիւններ էր հաղորդում օրուայ անցուղարձի, կատարուած դէպքերի՝ «Քաղաքական ու պատերազմական, բանասիրական ու եկեղեցական դիպուածների» վերաբերեալ: Պարբերականը ունեցել է յատուկ աշխատակիցներ, ովքեր պարզ ու հասկանալի լեզուով յօդուածներ եւ այլ նիւթեր են գրել գիտական աշխարհում տեղի ունեցող նորութիւնների մասին: Այն անդրադառնում էր ինչպէս անցեալին, այնպէս էլ իր ժամանակի պատմաքաղաքական իրադարձութիւններին, սակայն ցուցաբերում էր չափազանց զգուշաւոր մօտեցում: «Դիտակ Բիւզանդիեանը» հրատարակուել է մինչեւ 1816 թուականը:*

*Միիթարեան միաբանութեան հերթական պարբերականը 1843 թուականին լոյս տեսած «Բազմավիպ»ն է, որ ինքնին նշանաւոր դարձաւ նաեւ նրանով, որ շարունակում է յարատեւել մինչեւ օրս: Այն հանդէս եկաւ որպէս օրագիր բնական, տնտեսական եւ բանասիրական գիտելեաց: Իսկ «Բազմավիպ» անունը յուշում էր, որ այն բազում բաներ վիպող է եւ բազմապիսի բաներ պատմող: «Բազմավիպ»ի առաջին խմբագիրը եղաւ բազմափորձ եւ բանիմաց Հ. Գաբրիէլ Այվազովսկին, ով այդ պահին գտնուում էր ամենածաղկուն տարիքում՝ երեսունմէկ տարեկան հասակում եւ այդ ոչ հեշտ եւ շատ պատասխանատու պարտականութիւնները կատարեց չուրջ վեց տարի: Իսկ խմբագրական խորհրդի անդամներն էին Հ. Ղեւոնդ Ալիշանը եւ Հ. Յովհաննէս Սորկուճեանը:*

*«Բազմավիպ» հանդէսում յաճախակի էին փոխւում խմբագիրները: Բաւական է նշել, որ 1843ից մինչեւ 1880 թուականը այն ունեցել է տասներկու խմբագիր (Հ. Գ. Այվազովսկի 1843-1849),*

Հ. Ղեւոնդ Ալիշան (1849-1851), Հ. Օքսենտիոս Գուրգէնեան (1852-1853), Հ. Գրիգոր Ճէլալէան (1854-1856), այնուհետեւ 1858-1861 եւ 1863-1866), Հ. Հմայեակ Պապիկեան (1856-1861), Հ. Ա. Սիռոն Սիրոնեան (1862-1866), Նորացը Բիւզանդացի (1867-1868), Հ. Աթանագինէս Գաբրիանեան (1868-1870), Հ. Յակոբոս Խսավերտսենց (1871-1872), Հ. Կոմիտաս Խսէնտէրեան (1873-1875), Հ. Արսէն Սուքիրեան (1875-1876), Հ. Արիստակէս Քասդանտիլեան (1877-1882):

Խմբագիրների այդպիսի յաճախակի փոփոխութիւնը պայտանաւորուած էր այն հանգամանքով, որ միաբանութեան պատասխանատուները զգաստ եւ մշտարթուն հետեւում էին հանդէսի խմբագիրների ծառալած գործունէկութեանը եւ որչակի խըստապահանջնօպութիւն ցուցաբերում: Վերոնշեալ պահանջնօպութիւնը յստակ սահմանում էր, որ որեւէ խմբագիր կամ աշխատակից իրաւունք չունէր խախտելու միաբանութեան կանոնադտակից իրաւունք սահմանուած օրէնքներն ու չափանիշները եւ օտարութեամբ սահմանուած վարդապետութեան մէջ: Մարրեր մտցնելու կրօնական դաւանանքի վարդապետութեան մէջ:

Հայ իրականութիւնը, այդ իրականութեան եւ միջավայրը  
մէջ ապրող հայ մարդն ու քաղաքացին չէր կարող երկար կտրո-  
ւած մնալ աշխարհում ընթացող քաղաքական, հոգեւոր-բարոյա-  
կան, տնտեսական, մշակութային գործընթացներից: Եւ այդ բա-  
րեւ նրան օգնում եւ զօրավիր էին «Բազմավիճակ»ը եւ Միսիթա-  
ռեան միաբանութեան հայերի հրատարակած միւս արժեքաւոր  
գործերը:

**Չուշանալ,** յետ չմնալ աշխարհում ընթացող գիտական մը-շակութային, քաղաքական գործընթացներից, չմեկուսանալ սե-փական միջավայրի պատերի ներսում,- ահա՝ այն կարգախօսն ու սկզբունքային մօտեցումը, որ առաջին իսկ համարներից որդե-գրեցին «Բազմավէպ»ի խմբագիրներն ու Մխիթարեան միաբա-նութեան առաջնորդները:

Այդ խնդիրները լուծելու համար հանդէսին անհրաժեշտ էր նախեւառաջ առաջնորդուել լեզուական նոր քաղաքականու-թեամբ: Այս այդ պատճառով եւ նպաստակով է, որ «Բազմավէ-պ»ը որդեգրեց ոչ թէ «ուամկախանոն» աշխարհաբարը, այլ ԺԹ. դարի առաջին տասնամեակների արեւմտահայ մտաւորականու-թեան գործածած լեզուն, որը միայն նոր էր սկսել ձեւաւորուել որպէս գրական լեզու եւ գեռ ճանապարհ ունէր անցնելու:

Առհասարակ հանդէսը վարում էր լեզուական ճկուն քաղա-քականութիւն, գտնելով, որ որոշ նիւթեր նախընտրելի է հրա-պարակել գրաբարով (յատկապէս բանաստեղծական քերթուածք-ները): Լեզուական այսպիսի «Երկկենցաղութիւնը» ընկալելի եւ հասկանալի էր ժամանակակիցների կողմից: Հանդէսի էջերում թարգմանական գրականութեան ընաիր էջեր էին ներկայացւում, յատկապէս ԺԹ. դարակէսի Փրանսիական գրականութեան հան-ճար Լամարթինի գործերը, որոնք այնքան մեծ ազդեցութիւն են գործել ժամանակի եւ յետագայի հայ բանաստեղծական մտքի փայլատակման վրայ:

Այս առումով տեղին է մէջբերել եւ դիտարկել հանդէսի անդրանիկ համարից հետեւեալ իմաստաւորումը. «Մեր բանասէրնե-րուն հանյական բան մը ընել ուզկեռվ, աս օրագրին մէջ երբեմն եր-բեմն ազգային մատենագրութենեն ի զատ՝ կը նայինք, որ հիմակուան օտար ազգաց մատենագրութեանը վրայ ալ խօսինք, ու մեր ատենի ե-րեւելի մատենագիրներուն գրուածներէն գէք մանր նաշակներ տանք՝ արձակ կամ ոտանաւոր քարգմանութեամբ: Այս անգամ հոս դրածնիս Լամարթինին գեղեցիկ ոտանաւորներէն մէկն է՝ նիշդ քարգմանած»<sup>1</sup>:

Այնուհետեւ նշում է, որ Ալֆոնսոյ Լամարթինը այժմեան ողջ Եւրոպայի լաւագոյն ստեղծագործողն է եւ իր գրուածքների երեւելի յատկանիշներն են. «հաստատուն բարեպաշտութեան հոգի, փափուկ զգացմունք, բարակ մտածողութիւն, եւ վառվըուն երեւա-

1 «Բազմավէպ», 1843, թիւ 1, 16:

կայութիւն»<sup>2</sup>: Վերջում ասւում է, որ յաջորդ անգամներ «մէկալներուն ալ հաշակը կու տանք»<sup>3</sup>:

Ահա այսպէս, սկսած անդրանիկ համարից, «Բազմավեպ»ը քայլ առ քայլ, համար առ համար դաստիարակում եւ կոթում էր հայ ընթերցողների միտքն ու հոգին, գեղագիտական ընտիր ճաշակ զարգացնում: Սկսած յատկապէս առաջին խմբագիրներից, հանդէսի էջերում ձեւաւորւում, ամրապընդուում եւ հաստատակամ է դառնում ազգային ինքնութեան եւ հոգեւոր հայրենիքի զգացողութիւնն ու հաւատամքը: Հանդէսի առաջին տարին ամփոփելուց յետոյ, 1844 թուականի առաջին իսկ համարի առաջարանում հետեւեալ ուշագրաւ դիտարկումն է. «Ուղիղ եւ գեղեցիկ դիտաւորութիւնն, ամենայարմար միջոց, հաստատուն յոյս, անխոնց աշխատութիւնն, եւ ամենեն աւելի հշմարիտ ազգասիրութիւնն. ասոնք եղան «Բազմավեպին» առաջին տարուանը մէջ մեր առաջին հաշալերող եւ միիթարող մտածութիւնները»<sup>4</sup>:

Ցիրաւի նոյնքան ազգեցիկ է սոյնի շարունակութիւնը. «...մարդու մը՝ իր ազգին լուսաւորութեանն ու յառաջդիմութեանը համար աշխատելէ աւելի գեղեցիկ ու վսեմ ի՞նչ դիտաւորութիւն կրնայ ըլլալ. աս դիտաւորութեան հասնելու համար ուրիշ ի՞նչ յարմար միջոց կրնայ ըլլալ, բայց երեք ընտանի եւ փոփոխական ու զուարենաի ոնով մը ոչ միայն դիւրիմաց բաները սորվեցնել չգիտցողին, հապանաւ բանեւ բարակ եւ խորունկ գիտելիքները մանրացուցով կամ դիտակավ ցուցենելու մը պէս՝ պարզել, մեկնել, ու ամենուն հասկըցուելու բաները ընել. բարյական խրատները ծարաւի հոգուց յստակ ջրի պէս խմբընել. մարդկային խելքին գիւտերն ու հեարքները իբրեւ հայիի մը մէջ ցուցնել»<sup>5</sup>:

Իր գոյութեան այս 175 տարիների ընթացքում «Բազմավեպ»ը հնարաւորինս ամէն ինչով նպաստեց համայն հայութեան ազգային ինքնութեան ամրապնդմանն ու նրա հոգեւոր էութեան հարստացմանը: Հայրենասիրութեան դասական ձեւակերպումը, որն այնքան հոգեզմայլ եւ խորունկ իմաստութեամբ ձեւակերպել է հանդէսի մեծահռչակ խմբագիրներից Հ. Ղեւոնդ Ալիշանը շատ սերունդներ է կրթել ու տարել հետեւից. «Ուր բաղաժանիք չիմ»՝

2 Անդ:

3 Անդ:

4 «Բազմավեպ», 1844, թիւ 2:

5 Անդ:

չկայ եւ հայրենիք... բուն իսկ հայրենիք մեք եմք, անձն իւրաքանչիւր, եւ լաւութիւնի նեցուկի են նորա»<sup>6</sup>: Ալիշանեան կամ «Բազմավկէպ»եան հայրենասիրութիւնը սահմանում էր սոյն կարգն ու օրէնքը. «Ճանաչել եւ պահել անվթար զսեփական շնորհս ազգիս, զիեզու նորա, զպատմութիւն նորա, զսովորութիւն եւ զախորժակս նորա անվնաս, զիարազատ դպրութիւն նորա եւ զփառս անուան նորա: Զայսպիսի կամիմ հայրենասիրութիւն»<sup>7</sup>:

«Բազմավկէպ»ը տասնամեակներ շարունակ մաքառեց իր լաւագոյն խմբագիրների եւ աշխատակից-յօդուածագիրների ջանքերով ստեղծելու օտար տիրակալութիւնների ներքոյ բաժան-բաժան եղած ու անպաշտպան մնացած հայ ազգի ինքինապաշտպանութեան հոգեւոր համակարգը, ձգտելով նախեւառաջ վերարթնացնել որպէս ժողովուրդ՝ նրա ազատ ու անկախ ապրելու եւ հէնց այդպիսի հայրենիք ունենալու յիշողութիւնն ու բարոյակամային որակները:

Նախապէս հաշուարկուած ու մշակուած գրական, գիտական, գիտական ու մշակութային խելօք, լայնախոհ քաղաքականութեամբ «Բազմավկէպ»ը իր էջերը հիւրընկալորէն բացեց հայ իրականութեան տարբեր շերտերն ու բնագաւառները ներկայացնող մտաւորականների առջեւ, որոնք ոչ միայն չէին անդամակցում Միսիթարեան միաբանութեանը, այլև երեմն համակիր ու անդամ էին հակընդդէմ որեւէ այլ կրօնական եւ հասարակական կազմակերպութեան:

Ամսագրի էջերը ժթ. դարի կէսերին բացուեցին նաեւ ստեղծագործող կին անհատների առջեւ, որը բացառիկ մի երեւոյթ էր իր ժամանակի համար: 1861 Մարտին հանդէսի էջերում հրապարակուեց Սրբուհի Աստուածատութեանի գրաբար երկարաշունչ մի բանաստեղծութիւնը:

Տարէցտարի «Բազմավկէպ»ի էջերում հրապարակում էին հայշաբարհի տարբեր հաստուածները ներկայացնող հեղինակների գործերը (ինչպէս արեւմտահայ, այնպէս էլ արեւելահայ, ինչպէս պոլսահայ, այնպէս էլ թիֆլիսահայ, ինչպէս նաեւ աշխարհի զանազան գաղթօջախների):

Դրանով իսկ հանդէսը տարածւում եւ հոգեւոր-բարոյական առումներով արմատաւորուում էր հայութեան բազմաբեւու հա-

6 «Բազմավկէպ», 1845, թիւ 22, 343:

7 «Բազմավկէպ», 1848, թիւ 12, 181:

տուածների շրջանում, դառնալով նրանց սեղանի յոյժ սպասելի պարբերականը: Դա մեծապէս ոգեւորում էր ու նոր լիցքեր հաղորդում հանդէսի պատասխանատուներին, որոնք արդէն 1870ական թուականներին պատուախնդրութեամբ ազդարարում էին, որ իրենց ամսագիրը Ս. Ղազար կղզուց տարածւում է մինչեւ Ասմիայի, Եւրոպայի եւ Ափրիկէի հայահոծ ու հայաշատ գաղթօջախները՝ կ. Պոլիս, Զմիւրնիա, Պաղտատ, Գահիրէ, Կալկաթա, Լոնտոն, Փարիզ, Մոսկուա, Պարու, Թիֆլիս եւ այլուր:

Այսինքն, ասել կ'ուզի, որ «Բազմավէպ»ը մէկ կրօնական միաբանութեան պաշտօնաթերթից վերածւում էր լնդէծուած ու չնչեղ համահայկական բնոյթի եւ ուղղուածութեան հանդէսի:

Եւ ամէնից կարեւորն ու շեշտադրելին. «Բազմավէպ»ը տասնամեակներ չարունակ դարձաւ ոչ միայն հայ բազմաշերտ ընթերցողների հոգեւոր սննդի մատակարարը, այլեւ վերածուեց հայ ընթերցող եւ մտաւոր հասարակայնութեան մտաւոր, գիտական, բարոյական, մշակութային ոգորումները կազմակերպող, ընթացք եւ ուղղութիւն ցոյց տուող ուժի կամ կենտրոնի:

Քսաներորդ դարում «Բազմավէպ»ը շարունակում էր իր հայագիտական, եւ դրանով իսկ հայրենասիրական յատուկ ուղղուածութիւնն ու առաքելութիւնը՝ ասպարէզ տալով իր ժամանակի հայագիտական խոշոր դէմքերին: Հանդէսը կրկին յատուկ ուշադրութիւն էր դարձնում պատմաբանասիրական, աշխարհագրական եւ ժողովրդագրական թեմաներին:

Այստեղ պէտք է նշել, որ «Բազմավէպ»ը առհասարակ քիչ է շօշափել քաղաքական թեմաները, քիչ է անդրադարձել իրականութեան մէջ առկայ սոցիալ-քաղաքական սուր խնդիրներին, որ առիթ է տուել ծայրայեղ մտայնութեան տէր որոշ գործիչների այն որակել որպէս «Էկլիսիկ», այսինքն՝ բոլոր սկզբունքները խառնիխուն միաւորող եւ հասարակական երեւոյթներին իբր ոչ առաջադէմ դիրքերից մօտեցող պարբերականի:

Մինչդեռ «Բազմավէպ»ը շարունակում էր հաւատարիմ մնալ իր ուղեգծին եւ դրանում էր նրա անբեկանելի մեծութիւնը, առաջատարութիւնն ու սկզբունքայնութիւնը՝ ծառայել միայն ու միան հայագիտութեանը՝ առանց որեւէ քաղաքական համոզմունքի, համակրանքների կամ հակակրանքների:

Փոխարէնը այս շրջանի «Բազմավէպ»ին յատուկ է հայերի մշակութային, հոգեւոր-բարոյական կողմնորոշումներին նորօրէն արձագանքելը, Մփիւռքի եւ Հայաստանի կենտրոններում հայկա-

կան հինաւուրց քաղաքակրթութեան աւանդների ու ժառանգութեան պաշտպանութիւնը, մշակութային տեղաշարժերի արտացոլումը մեր մտաւոր կեանքի ոլորտներում մի կարեւոր նպաստակաղումով՝ նպաստել հայոց հոգեւոր միասնութեանն ու ներդաշնակութեանը հայագիտութեան անդաստանում եւ հայագիտութեան միջոցով:

«Բազմավիճակ»ը վերոնշեալ ժամանակաշրջանում տպագրել է հայրենիքի եւ Սփիւռքի բազմաթիւ հայագէտներին, ինչպէս նաև օտարազգի ճանաչուած հայագէտ գիտնականների:

Հայաստանում խորհրդային իշխանութեան տարիներին «Բազմավիճակ»ը թէեւ որոշ հասկանալի սահմանափակումներով, այնուամենայնիւ, միշտ պահպանեց կապը հայրենիքի հետ եւ շարունակում էր էջնը ծառայեցնել հայրենիք-Սփիւռք կապերի ամրապնդմանը ընդհանուր ազգային-հայագիտական հենքի եւ ուղղուածութեան վրայ:

Վերջին շրջանում, այնուամենայնիւ, հանդէսը հաւանաբար աշխարհագաղաքական կարուկ փոփոխութիւնների բերումով ստիպուած է արտայայտել որոշակի իր վերաբերմունքը վերոնշեալ քաղաքական իրողութիւնների եւ զարգացումների վերաբերեալ, այդ նպատակով ընտրելով յատուկ գրական ոճ, կամ աւելի շուտ, հին ոճի նորովի օգտագործումը, որ կոչում է խըմբագրական:

Զուսպ եւ համառօտ, բայց եւ շատ արտայայտիչ այդ խմբագրականներում խտացուած շատ բան է ասւում, թէեւ բացառապէս բարոյախօսական ըշանակներում։ Այսպէս, խմբագրականներ են նուիրուել գլոբալիզացիայի, գենդերային ծայրայեղութիւնների, հասարակութեան մէջ մտաւոր բեւեռացումների, անհանդուրժողականութեան եւ իր իսկ բնութագրումով՝ «ամէն ինչ ամէն բանի դէմ եւ ամէն ո՛վ ամէն ինչի դէմ» իրողութիւնների կամ սկզբունքների դատափետմանը, որոնք «Բազմավիճակ»ի խորին համբումով՝ «մեր արդիական սոսին են»<sup>8</sup>:

Վերջին շրջանում՝ աւելացուել են նոր խորագրեր՝ «Բնուրագիքներ» եւ ուսումնասիրութիւններ, հաղորդումներ, նշումներ, վիճարկումներ։

2012-2017 հանդէսը տպագրում է տարեկան չորս անգամ, ընդ որում յաճախ զոյտ միացեալ թուահամարներով։

8 «Բազմավիճակ», 2013, թիւ 1-2, 9:

Հայ ամենաերկարակեաց հանդէսին ցանկանում եւ մաղթում ենք երկար ու յարատել երթ, այնքան երկար ու յարատեւ, որքան երկար յարատեւելու է հայագիտութիւնը՝ իր անբաժան ու մշտական ուղեկցի՝ «Բազմավէպի» հետ:

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

### Summary

## “BAZMAVEP” AS A JOURNAL WITH THE PROMINENT PAST

ARMEN KARAPETYAN

The cruel historical destiny of the Armenian nation deeply engraved in its culture as a whole, and in its periodical press in particular. This factor specifically determined a decision of the historical, academic and media institution, that bears the name of the “Mkhitarist Abbey,” to settle and function out of the Armenian borders, in Venice, Trieste and Vienna. One of its significant publications, the “Bazmavep” journal, had appeared in print in 1843, in Venice; and the very fact that this media did not interrupt up today, makes it moreover remarkable. The editors of this periodical (Gabriel Aivazovsky, Ghevond Alishan, Oksendios Kurkenian, Krikor Jelalian) were the most educated, intelligent, well-bread and progressive persons in their times, not only in Armenian milieu, but also by European and world-wide standards. From the very first issue, the whole content of the “Bazmavep” shaped, consolidated and made firm the sense and credo of the folk mind and spiritual homeland. Step by step the “Bazmavep” took the role of provider of inspiring feed for Armenian readers from different social strata; and it also turned into the center where scientific, ethical and cultural struggle of the Armenian intellectual community was organized and got its course and school.